թուխթունի, որ մուխ կու խմէին, այս է՝ ի բերանն առնել և ի գուրս տալ, զայս տեսեալ թագաւորին՝ չկամէր թէ խմէին։ Եւ ի յԱթմէյտանն ևս նոյնպէս զմիւսն գլուխ հատեալ։

Եւ երեկոյիս Վարդապետն ի յՕրթաքոյն գնաց եւ ես գնացի ի ժամ և ընդ Մղտեսուն գնացաք ի տուն, և անտի իմ ելեալ ի տուն գնացի։

Դշի օր (21 Մայիս)։ Երեկոյիս ի Սուրբ Նիկողոս գնացի եւ տեսի զի Խաչատուր եկեալ էր՝ աշակերտ Ուրհայեցի Ովանէս վարդապետին։

Եշի օր (22 Մայիս) գնացի ի ժամ։ Օրս զայմախանն հինտ էլչուն պատիւ արաւ ի պաղչա Հասան Ղալֆային։

Երեկոյիս Նոխուտճի Տէր Անդրէասին տղան Մելքիսէթ էրէցն զկին իւր ծեծելով պառաչէր և կանչէր ի վերայ նորա, և սահմանակից և դրացիք նորա ժամանեալ անդ, և գնացելոցն զոմանս հայհոյեալ և զոմանս անարգեալ. քանզի զայս առնէր հանապազ որ զինովանայր՝ ամենեցուն, որպէս անցեալ տարիս ի յեկեղեցին մեր հայհոյեաց զեղիազար վարդապետն, հաւատ եւ օրէնք բազումս անարգեալ. եւ զայս տեսեալ ժողովրդոցն նորա՝ ելին ի ժողովրդենէ և եղեն այլուսմ։ Եւս այսօր եղև այս և չունէր երես թէ գայր յեկեղեցին։

Եւ առաւօտուս Ուրբաթ (23 Մայիս)։ Երեկոյիս ի Պարմաղափուն և այլ Ս. Բ անուանի տեղիսն գողք կախեցին, որ ի վաղուց գործէին զչարիս, և բազումք են եղեալ ընկերօք, որ և անցեալ Գշիս զոմանս ի թին տուեալ, և այժմ յայտնեցաւ չարութիւն սոցա, որ Զ տարոյ կորուսեալ ըզգակ գտաւ ի քով սոցա, որ բերեալ էին բեռամբ ի մօտ սուպաչուն։

Շաբաթ (24 Մայիս) առաւօտուս ի ժամ։ Եւ բազում թօփեր նետեցին վասն գնալոյ թագաւորին ի Քէհատխանան ի սէյիր։